

մերժեն Հայկոյ և անոր յայրորդ իշխանաց վրայ քաղաքական մատենի վաւերականութիւնը, ըսելով թէ կարելի բան չէ որ Հայոց ղոյսերիմ՝ ժողովուրդը ժամանակաւ զրաժ ըլլայ անոնց իշխանաց քաջագործութիւնները, գոված ըլլայ անոնց առաքինութիւնները և ընդհակառակն իւր ազգին իշխանաց պարտութիւնքն և պարսաւները: Արդարեւ կարելի էր. և ոչ թէ Ասորեստանցիք երգեցին զանոնք, ինչպէս կ'ենթադրեն հակառակորդը, այլ անյիշատակ ժամանակի Հայ վիպասաններն և տարեգիրք. իսկ Ասորեստանցիք այն ժողովրդական երգերէն և արքունի յիշատակագիրներէն հաւաքեցին միայն: Երկրորդ, ինչպէս ըսինք, յետոյ ժամանակաւ Ասորին և Մ. Խորենացի ևս իրենց գերը խաղացին, այն ժամանակագրական և ժողովրդական համառօտ աւանդութիւնքը մարմնաւորելով և զգեստաւորելով:

Ուստի այս մասին նկատմամբ մեր պատուական վերձանողքը կը կրկենք ան. Յովսէփ Գալթրճեան, Հայոց մատենագրութեան պատմութիւն, տրպեալ 'ի Վիիննա, 1854. առ Բազմաւ. վէպ Հանդեսն, 1850, զեկտեմբեր, և 1854, յունուար. առ Հ. Գարեգին Զ.

Պատմ. Հայերէն դպրութեան, տպեալ 'ի Վենետիկ, 1865. առ Պ. Լամին և առ Պ. Տիւրբիէ. որոնց առաջինն իւր վէպք Քնոյն Հայաստանի կոչուած երկասիրութեամբն, կրկին տպագրեալ 'ի Մոսկուա, յամին 1850 և յամին 1882, և երկրորդն Երզնք ժողովրդականք Հայաստանի գրուածով՝ ամենամեծ լոյս ծաղեցին վերջի ժամանակներս Մ. Խորենացոյ պատմութեան վրայ, և միանգամայն անյիշատակ ժամանակի հնութեան անջնջելի դրոշմը պարզեցին:

Ո՛րչափ ևս, ո՞վ գիտէ, ասոնց նման շատ հին աղբերաց կնիքներ գոց կը մնան քննադատական հորիզոններուն վրայ. բայց արդի բանասիրաց՝ արեւելեան պատմութեան, և ժողովրդական իրաց վրայ խորին տեղեկութիւն չունենալուն պատճառաւ և կամ զանոնք 'ի նկատի չառնելուն համար՝ տակաւին խաւարի մէջ կը մնան: Անտարակոյս այս այսպէս է. ինչպէս օրինակ իմն՝ այս վերջի տարիներուս մէջ անգրագրաբան շատ կարեւոր կէտերն մեզմէ տասն քսան տարի յառաջ ընթացող քննադատից անձանթ չէին Հայոց պատմութեան մասին:

Կը շարունակուի.

Զ. ԲԱՐՍԵՂ ԱՐԿԻՍԵԱՆ

Ա Ռ Ա Մ Ք

Չորս իրք է՝ որ խանգարէ զբանն 'ի բնութենէն: Տրտմութիւն խանգարէ դիմաստութիւն. և Խոր տրտմութիւն վնասէ զանձն. և Բաղց և ծարաւն, որ ապականէ զանձն և աւերէ զբնութիւն. և Մահն՝ որ խափանէ զմտքն 'ի կենաց:

Չորս են՝ որ անն զմարդ և զարգանան. Ուսանիլ իմաստութիւն և խելքն աւելի. Բարի գործքն 'ի հոգին աւելի է. Գոհութիւն 'ի յոգանին աւելի է. Աղէկ սրուեստ և Հարկիք աւելի է:

Չորս իրաց չէ պարտ հաւատալ. Թշնամուոյն սիրելութեան. Ագահ մարդոյն. և Անհաւատին երգման. և Բոզ կնոջն՝ սիրոյն: Այս չորս ցեղ մարդոյս մի հաւատալ:

ՈՍԿԻՐՈՒԿ